

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԵՎ**

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS  
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*Խմբագրական խորհուրդ՝*

**Արամ Մինոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Զուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Հանլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Արամ Սիմոնյան** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсисян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Виравян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....	6
Oghannes Khorikyan, K VOПРОСУ О ЦЕНТРЕ САТРАПСКОЙ АРМЕНИИ Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՈՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	14
Артак Мовсисян, Лианна Карапетян, О ПРОБЛЕМАХ ХРОНОЛОГИЧЕСКИХ И ТЕРРИТОРИАЛЬНЫХ ГРАНИЦ ЦАРСТВА СОФЕНЫ Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE	
Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ .....	24
Аргишти Варданян, РОД МАМИКОНЯНОВ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ АРШАКИДОВ ТРДАТА ВЕЛИКОГО И ХОСРОВА КОТАКА Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK	
Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА .....	33
Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-ՄԻ Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱ	
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY	
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	48
Давит Тиноян, АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ ПРАВЛЕНИЯ ХЕТУМА II Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II	
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) .....	55
Диана Айрапетян, РОЛЬ ОТТОМАНСКОГО ФУТУВВАТА И АХИЙСКОГО БРАТСТВА В ИСЛАМИЗАЦИИ АРМЯНСКИХ РЕМЕСЛЕННИКОВ (XIII-XV ВЕКА)	
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)	
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՐԸ .....	63
Феликс Мовсисян, ВЫДАЮЩИЙСЯ ЗАПАДНОАРМЯНСКИЙ МАСОН XIX ВЕКА СЕРОВБЕ АЗНАВУР Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR	
Հովիկ Գրիգորյան, ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) .....	77
Овик Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)	

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)	
Վանիկ Կիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԻ ՀԱՍԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.....	95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ	
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)	
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ .....	108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА	
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY	
Արամ Միմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ .....	129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ	
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS	
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА .....	137
Վալերի Թունյան, ԹՈՒՐԻՔԱՅԻ և ԱՂՐԵԶԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ	
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA	

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ .....	145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА	
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrтчyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE	
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ .....	158
Рафик Напетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА	
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT	

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ .....	166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА	
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC	

**ՄՓՅՈՒՐՔԱԿՏՈՒԹՅՈՒՆ**  
**ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ. ....	174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.	

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019	
Արման Եդիազարյան, Ալիկ Դարիբյան, Դիանա Դավթյան, Ինքնութիւնը և ՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	191
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ	
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH	
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	200
Ovannes Aleksanyan, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ	
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA	

**ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS**

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏՇՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԱԿԱՆԸ	206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА	
Haikaz Hovhannisyanyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION	

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ**  
**УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ	214
Levon Hovsepnyan, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ	
Levon Hovsepnyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY	

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ**  
**РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր:	222
ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ	224
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	226
INFORMATION ABOUT THE AUTHORS	228
Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ	230
NOTICE FOR THE AUTHORS	

## Ռաֆիկ Նահապետյան

### ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՄԱՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

**Բանալի բառեր.** Ժողովրդական բնակարան, Ազգագրական հանդես, Երվանդ Լալայան, Ստեփան Լիսիցյան, գլխատուն, Հայ ազգագրություն և բանահյուսություն, պատմաճարտարապետական, պատմաազգագրական, Դ. Վարդույան, Կենսապահովման մշակույթ:

Ժողովրդական բնակարանը և դրա հետ սերտորեն կապված տնտեսական ու կենցաղային կառույցները կենսապահովման մշակույթի կարևոր բաղադրատարրերից են: Ժողովրդական բնակարանն իրենից ներկայացնում է բարդ ու ինքնատիպ մշակութային կենցաղային համալիր՝ սերտորեն կապված ժողովրդի կյանքի ամենաբազմազան կողմերի՝ բնակչությանը պայմանների, գերակշռող զբաղմունքների ու տնտեսական ուղղվածության, տեխնիկայի զարգացման մակարդակի, գույքային և դասակարգային հարաբերությունների, ընտանեկան կենցաղի ձևերի, համայնքային ավանդույթների, ժողովրդի գեղագիտական պատկերացումների, կրոնա-մոգական հավատալիքների հետ<sup>1</sup>: Ուստի բնակարանի ուսումնասիրությունը նպաստում է ժողովրդի պատմության շատ հիմնախնդիրների պարզաբանմանը, որոնք վերաբերում են նրա էթնիկ ծագմանը (этногенез), տնտեսության ընդհանուր բնույթին, ընտանեկան և հասարակական կենցաղին, հոգևոր մշակույթին<sup>2</sup>: Իր հերթին բնակարանի համակողմանի ուսումնասիրությունը պահանջում է նշված երևույթների խոր իմացություն, որովհետև շատ դեպքերում նրանցով է պայմանավորված բնակարանի այս կամ այն առանձնահատկության երևան գալը: Պատահական չէ, որ ժողովրդական բնակարանը հետաքրքրում է տարբեր ուղղության մասնագետների, սակայն նրա ուսումնասիրությամբ զբաղվել են առավելապես ճարտարապետներն ու ազգագրագետները: Գարտարապետների ու շահագործողները կենտրոնանում է գլխավորապես շինարարական-կառուցողական տեխնիկական հնարքներին, նյութին, արտաքին ձևին ու կառուցողական այլ հարցերի վրա: Նրանք հաճախ դիմում են ժողովրդական բնակարանին՝ կոթողային ճարտարապետության առանձին ձևերի ծագման հարցերը պարզաբանելու նպատակով: Այլ է ազգագրության հետաքրքրությունների շրջանակը: Լինելով գիտություն էթնիկական ընդհանրությունների մասին, ազգագրությունը նպատակ է հետապնդում բնակարանա-բնակավայրային համալիրի, որպես մի ամբողջական սոցիալական ֆենոմենի, բազմակողմանի խորքային ընկալման և էթնիկ մշակույթի հանուր համակարգում դրա տեղի ու դերի բացահայտման հնարավորությունը: Այն նաև միտված է բացահայտելու էթնիկական առանձնահատկությունները յուրաքանչյուր էթնոսի մշակութային համալիրում: Այդ առանձնահատկությունները կրում են մշակույթի այն մասը, որ բնորոշվում է որպես ավանդական-կենցաղային մշակույթ<sup>3</sup>:

**Դաշտային ազգագրական նյութեր և դրանց հիման վրա կատարված հետազոտություններ. XIX դարավերջ - XX դ. 40-ական թթ.**

Հայ իրականության մեջ ժողովրդական բնակարանը ազգագրագետների և ճարտարապետների ուշադրությանն է արժանացել XIX դ. վերջերից և առ այսօր բավական թվով ուսումնասիրություններ կան մշակույթի այդ կարևոր բնագավառի վերաբերյալ: Դրանք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ պատմաազգագրական և պատմաճարտարապետական:

Հայկական գյուղական բնակարանի վերաբերյալ առաջին ազգագրական ուսումնասիրությունը կարելի է համարել Փարսադան Տեր-Մովսիսյանի «Հայ գյուղական տունը» գրքույկը<sup>4</sup>, որում հեղինակը իր հիշողությունների հիման վրա վերականգնում է հիմնականում Սյու-

\* Հոդվածը ներկայացվել է 04.10.2019 թ., գրախոսվել է 08.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:

<sup>1</sup> Ст'у Границкая Н.Н., Листова Н.М., Токарев С.А., Типы сельского жилища в странах Зарубежной Европы. Введение, М., 1968, с. 3.

<sup>2</sup> «Древнее жилища народов Восточной Европы», М., 1975, с. 3.

<sup>3</sup> Бромлей Ю.В., Этнос и этнография, М., 1973, с. 203-214.

<sup>4</sup> Տեր-Մովսիսյան Փ., Հայ գյուղական տունը, Վիեննա, 1894:

նիքի և Արցախի հայկական գյուղերի, գյուղական տների և գեղջկական կենցաղի ընդհանուր պատկերը: Աշխատանքում փորձ է արված դասակարգել գյուղական բնակարանի տիպերը և այն համեմատել եվրոպական գյուղական տների հետ:

Հայկական ժողովրդական բնակարանի ուսումնասիրման գործում որոշակի ավանդ ունի «Ազգագրական հանդեսը»-ը և հատկապես նրա հրատարակիչ Ե. Լալայանը: Հայաստանի մի շարք շրջանների պատմաազգագրական նկարագրություններում հակիրճ տեղ է գտել նաև գյուղական բնակարանը: Ե. Լալայանը անդրադարձել է Ջավախքի<sup>1</sup>, Արցախի<sup>2</sup>, Ջանգեզուրի<sup>3</sup>, Լոռու<sup>4</sup>, Նախիջևանի<sup>5</sup>, Գանձակի<sup>6</sup>, Գեղարքունիքի<sup>7</sup>, Վասպուրականի<sup>8</sup>, Հ. Մուրադյանցը՝ Համշենի<sup>9</sup>, Սահակ Մովսիսյանը՝ Բուլանըխի<sup>10</sup>, Հ. Մալխասյանը<sup>11</sup>՝ Ջավախքի, Ե. Շահագիզը՝ Նոր Նախիջևանի<sup>12</sup> գյուղական բնակարաններին: Նշված հեղինակների հաղորդած նյութը հիմնականում նկարագրական բնույթ են, բայց արժեքավոր են նշված շրջանների բնակարանների ընդհանուր պատկերը վերականգնելու տեսանկյունից:

Ազգագրական նյութերի ընդգրկման, գեղջկական տան հարազատ նկարագրության առումով ուշադրության են արժանի նաև մի շարք տեղագրական, ազգագրական, բանահյուսական հրապարակված գործեր, ինչպես, օրինակ՝ Գ. Հովսեփյանի՝ «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», Թիֆլիս, 1892, Ս. Սմբատյանի՝ «Տեղագիր Ծովագարդ գավառի, որ այժմ Նոր-Բայազետ գավառ», Թիֆլիս, 1895, Ա. Մխիթարյանի՝ «Փշրանքներ Շիրակի ամբարներից». - «Էմինյան ազգագրական ժողովածու» (ԷԱԺ), 1901, հ. 1, Ա. Ահարոնյանի՝ «Հռո կինը. նյութեր մեր ժողովրդական կյանքի ուսումնասիրության համար», Թիֆլիս, 1897, Գ. Սրվանձոտյանցի՝ «Գրոց ու բրոց» ու այլ գործեր, Երևան, 1978, հ. 1, 1982, հ. 2, Ղ. Ալիշանի՝ «Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց», Վենետիկ - Ս. Ղազար, 1881, նույնի՝ «Այրարատ. բնաշխարհ Հայաստանեաց», Վենետիկ - Ս. Ղազար, 1890:

Հայկական գյուղական բնակարանի ազգագրական համակարգված գիտական ուսումնասիրությունը սկիզբ է առնում հայ նշանավոր ազգագրագետ Ստ. Լիսիցյանի գործունեությամբ: 1925 թ. հունիսի 21-ին Ստ. Լիսիցյանը Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի (ԿՊՀԻ) գիտնականների ժողովում զեկուցում է հայկական գյուղական բնակարանների ուսումնասիրման հարցի վերաբերյալ, որը նվիրված է գլխատան ուսումնասիրությանը Ղարաբաղում<sup>13</sup>: Ստ. Լիսիցյանը առաջինն էր, որ հանգամանալի ներկայացրեց Հայաստանի գյուղական բնակարանի հիմնական տիպը՝ «գլխատուն» և այդ եզրույթը մտցրեց գիտական շրջանառության մեջ: Նրա բացահայտումները վերաբերում են հայ գյուղական տան՝ «գլխատան» ճարտարապետական կառուցվածքի և հայոց պաշտամունքային կառույցների ծագումնաբանական ընդհանրություններին, որով հավաստվում է հայ պրոֆեսիոնալ ճարտարապետության տեղաբնիկ բնույթը, հանգամանք, որը կասկածի տակ էր առնվել որոշ հետազոտողների կողմից: Տալիս է նաև գլխատան նկարագրությունը, տարածման շրջանները, նրա աղերսը ժամատան, այլ կերպ ասած՝ հայ դասական եկեղեցական ճարտարապետության ակունքների կապը ժողովրդական բնակարանի համալիրի ճարտարապետության հետ և այլն: Հաջորդ զեկուցումն Բարձր Հայքի բնակարանների մասին էր<sup>14</sup>: 1926-1927 թթ. նույն տեղեկագրում հրատարակվում են նաև Լիսիցյանի հետազոտած այլ ազգագրական շրջան-

<sup>1</sup> Տե՛ս Լալայան Ե., Ջավախք, «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գ. Ա, Թիֆլիս, 1896, էջ 224-226:

<sup>2</sup> Տե՛ս Լալայան Ե., Վարանդա, «ԱՀ», գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 21-25:

<sup>3</sup> Տե՛ս Լալայան Ե., Սիսիան, «ԱՀ», գ. Գ, Թիֆլիս, 1898, էջ 199-202, «Ջանգեզուր», «ԱՀ», գ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 59-60:

<sup>4</sup> Տե՛ս Լալայան Ե., Բորչալուի գավառ, «ԱՀ», գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 197-204:

<sup>5</sup> Տե՛ս Լալայան Ե., Նախիջևանի գավառ, Ա մասն, Գողթն, «ԱՀ», գ. XII, Թիֆլիս, 1904, էջ 109-111:

<sup>6</sup> Տե՛ս Լալայան Ե., Գանձակի գավառ. Հայոց նշանավոր գյուղեր, «ԱՀ», գ. Ե, Թիֆլիս, 1899, էջ 307-335:

<sup>7</sup> Տե՛ս Լալայան Ե., Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք, «ԱՀ», գ. XVI, Թիֆլիս, 1907:

<sup>8</sup> Տե՛ս Լալայան Ե., Վասպուրական, «ԱՀ», գ. XX, Թիֆլիս, 1910, էջ 119-131:

<sup>9</sup> Տե՛ս Մուրադյանց Հ., Համշենցի հայեր, «ԱՀ», գ. Դ, Թիֆլիս, 1899, էջ 123-128:

<sup>10</sup> Տե՛ս Բենսե (Սահակ Մովսիսյան), Բուլանըխ կամ Հարք գավառ, «ԱՀ», գ. Ե, Թիֆլիս, 1899, էջ 43-45:

<sup>11</sup> Տե՛ս Մալխասյան Հ., Հայ գեղջուկի ալբոմը, «ԱՀ», գ. Զ, Թիֆլիս, 1900:

<sup>12</sup> Տե՛ս Շահագիզ Ե., Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք, «ԱՀ», գ. IX, Թիֆլիս, 1902:

<sup>13</sup> Տե՛ս Лисициан С.Д., К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам), "Известия кавказского историко-археологического института (ИКИАИ)", том III, Тифлис, 1925, с. 97-108.

<sup>14</sup> Տե՛ս Лисициан С.Д., Крестьянское жилище Высокой Армении, ИКИАИ, т. IV, Тифлис, 1926, с. 55-70.

ների՝ Մեղրու<sup>1</sup> և Գեղարքունիքի, Փամբակի<sup>2</sup> ու Վայոց Ձորի վերաբերյալ: Այդ ուսումնասիրությունների յուրատեսակ ամփոփումը կարելի է համարել գիտնականի «Очерки этнографии дореволюционной Армении»<sup>3</sup> աշխատության բնակարանին վերաբերող բաժինը: Ավելի ուշ լույս տեսավ նաև Ստ. Լիսիցյանի «Զանգեզուրի հայերը»<sup>4</sup> աշխատությունը, որի գլուխներից մեկը վերաբերում է բնակարանին: Իր ուսումնասիրություններում հեղինակը ավելի շատ ուշադրություն է դարձրել բնակարանի կառուցման տեխնիկական հնարքներին, ժողովրդական բնակարանի և կոթողային ճարտարապետության առնչություններին, ինչպես նաև բնակարանի ներքին կահավորանքին և օժանդակ տնտեսական կառույցներին, աշխարհագրական գործոններով պայմանավորված առանձնահատկություններին:

Հայկական բնակարանի աշխարհագրական գործոններով պայմանավորված կառուցվածքային լուրջ տարածքային առանձնահատկություններին է անդրադարձել նաև Խ. Սամուելյանը<sup>5</sup> օգտագործելով հիմնականում Ե. Լալայանի և Ստ. Լիսիցյանի ազգագրական նյութերը:

Հայաստանի պատմական ճարտարապետության հետազոտող Թորոս Թորամանյանն<sup>6</sup> իր մեծածավալ աշխատություններում անդրադարձնում է «օղուզների» (հսկաների) տների, մի բաժնով հնագույն տներին, քարայր-բնակարաններին:

Զանգեզուրի ավանդական բնակարանի՝ քարայրային տիպին է անդրադարձել Գ. Չուրսինը<sup>7</sup>: Լեռնային Ղարաբաղի հայերի գյուղական բնակարանի նկարագրություն կա Վ. Պ. Կոբիչևի մի աշխատության մեջ, որը, սակայն, հիմնականում կրկնում է Ստ. Լիսիցյանին<sup>8</sup>: Լոռու և Գեղարքունիքի գյուղական հին և նոր բնակարանների համեմատական բնութագիրն է տվել Դ. Վարդումյանը<sup>9</sup>: Շատ ավելի ուշագրավ է Դ. Վարդումյանի մեկ այլ աշխատանքը<sup>10</sup>, որում հեղինակը փորձել է բացահայտել բնակարանի առանձնահատկությունները Պատմական Հայաստանի տարբեր շրջաններում և դրանց առաջացմանը նպաստած տնտեսական և աշխարհագրական գործոնները: Սակայն աշխատանքի փոքր ծավալը հնարավորություն չի ընձեռել հեղինակին ավելի հանգամանորեն խորանալու քննարկվող հարցերի մեջ: Նշված հեղինակներից Ստ. Լիսիցյանը, Դ. Վարդումյանը, Վ. Կոբիչևը գյուղական հիմնական բնակարանների հետ մեկտեղ նկարագրել են նաև իրենց ուսումնասիրած շրջանների բնակչության սեզոնային բնակարանները: Այս վերջին բնագավառը, սակայն ավելի հանգամանորեն լուսաբանվել է Յու. Մկրտումյանի կողմից՝ կապված անասնապահական մշակույթի ուսումնասիրության հետ<sup>11</sup>: Իր ուսումնասիրություններում նա տվել է սեզոնային բնակավայրերի և բնակարանների դասակարգումը, նրանց պայմանավորվածությունը աշխարհագրական միջավայրով և բնակչության վարած տնտեսության բնույթով, որոնք շատ կարևոր են բնակարանի արեալային և համալիր ուսումնասիրության համար:

<sup>1</sup> Տե՛ս Լիսիցյան Ստ., «Из материалов по изучению жилищ Армении. "Крестьянское жилище мегринского района", ИКИАИ, т. V, Тифлис, 1927, с. 119-133.

<sup>2</sup> Տե՛ս Լիսիցյան Ստ., «Из материалов по изучению жилищ Армении. "Нор-Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов Памбакского и Даралагязского", ИКИАИ, Тифлис, 1927, т. VI, с. 133-140.

<sup>3</sup> Տե՛ս Լիսիցյան Ստ., «Очерки этнографии дореволюционной Армении», «Кавказский этнографический сборник» (այսուհետ՝ ԿՅՏ), 1955, - - 1. Տե՛ս նաև «Народы Кавказа», т. II, М., 1962, с. 504-513.

<sup>4</sup> Տե՛ս Լիսիցյան Ստ., «Զանգեզուրի հայերը», Ե., 1969, էջ 96-114:

<sup>5</sup> Տե՛ս Սամուելյան Խ., «Հին Հայաստանի կուլտուրան», հ. II, Ե., 1941, էջ 191-236:

<sup>6</sup> Տե՛ս Թորամանյան Թ., «Հայկական ճարտարապետություն», հ. II, Ե., 1942-1948:

<sup>7</sup> Տե՛ս Կուրսկին Գ. Փ., «Армяне Зангезура (краткий этнографический очерк)», Тифлис, 1931.

<sup>8</sup> Տե՛ս Կոբիչև Բ.Պ., «Крестьянские жилища народов Азербайджана в XIX в.», ԿՅՏ, М., 1962, т. III, с. 39.

<sup>9</sup> Տե՛ս Վարդումյան Դ., «Лондонские сообщения Института этнографии АН СССР» (КСИЭ), том XXXIII, М., 1960, с. 33-34.

<sup>10</sup> Տե՛ս Վարդումյան Դ., «Характеристика основных этнографических районов Армении в XIX в.», «VII международный конгресс антропологических и этнографических наук (МКАЭН)», М., 1964.

<sup>11</sup> Տե՛ս Մկրտումյան Կ. Ի., «Формы скотоводства и быт населения в армянской деревне второй половины XIX века», «Советская этнография» (այսուհետ՝ «ՏԵ»), 1968, № 4; Նույնի՝ «Формы скотоводства в восточной Армении (Вторая половина XIX – начало XX в.) (Историко-этнографическое исследование)», «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (այսուհետ՝ ՀԱԲ), ԿԻՄ, 6, 1974, էջ 7-90:



Համառոտ գծերով հայկական բնակավայրի ու բնակարանի համալիրների ուսումնասիրությունը տրված է “Народы мира” մատենաշարի “Народы Кавказа”, т. II հատորում (էջ 504-513):

Հայոց ժողովրդական տան՝ գլխատան և արհեստավարժ ճարտարապետության, հատկապես պաշտամունքային բնույթի կառույցների՝ եկեղեցի, մատուռ, վանական համալիր և այլն հորինվածքա-կառուցողական փոխառնչության հարցերին ընդհանրացնող հաղորդում է հրատարակել Դ. Վարդումյանը՝ «Հայոց ժողովրդական բնակարանը (գլխատուն) սրբարան» գեկուցման մեջ (տե՛ս «Հայոց սրբերը և սրբավայրերը» (ակունքները, տիպերը, պաշտամունքը), Երևան, 2001, էջ 357-360):

Այս առումով ուշագրավ է նաև հեղինակի «Հայաստանի հիմնական ազգագրական շրջանների բնութագիրը ժԹ դարում» («Բազմավեպ», Հայագիտական-բանասիրական հանդես, 2004, N 1-4) հետազոտությունը:

Հայկական տան առանձին բաժանմունքներին է անդրադարձել նաև ռուս ազգագրագետ Ս. Իլյինան<sup>1</sup>: Գիտնականը փորձել է համակարգել կովկասյան ժողովրդական բնակարանների ճարտարապետության փայտաշեն գմբեթների ծածկերի տարբերակները և ցույց է տվել, որ բացի Անդրկովկասից, փայտաշեն աստիճանաձև գմբեթներով տների որոշ ձևեր միմյանցից անկախ զարգացել են նաև մի շարք այլ երկրներում: Հայկական ժողովրդական կառույցների ուսումնասիրման որոշ հարցեր է շոշափում նաև վրացի ազգագրագետ Թ. Ա. Զիկովանին<sup>2</sup>, ով հիմնականում անդրադարձել է հայոց ավանդական բնակարանի հիմնական տիպի՝ գլխատան և վրաց «դարբազիների» ծագումնաբանական ու կառուցվածքային առնչակցության հարցերին: Գիտնականը Անդրկովկասյան աստիճանավոր-գմբեթաձև ծածկով բնակարանի դասակարգման և ծագման հարցեր է քննարկել, առաջ է քաշել հետաքրքիր տեսանկյուններ՝ աշխարհագրական միջավայրի և տնտեսության բնույթի հետ բնակարանային համալիրի տարբերակների ունեցած կապի վերաբերյալ: Մեկ այլ խորհրդային հետազոտող՝ Վ. Վիտովը, առաջ քաշեց բնակավայրերի և բնակարանների դասակարգման չափանիշներ, որոնք հետագայում դարձան խորհրդային մյուս հետազոտողների համար մեթոդական ուղեցույցներ<sup>3</sup>: Ռուս մեկ այլ հետազոտող Վ. Պ. Կոբիչևը նյութերի բարեխիղճ ուսումնասիրությամբ կարողացել է ճշգրտորեն որոշել հայկական լեռնավայրային տիպի բնակարանի՝ «գլխատան» տարածման շրջանները Արևելյան Անդրկովկասում<sup>4</sup>: Այս հիմնախնդրին է վերաբերում նաև Վ.Պ. Կոբիչևի և Ա.Ն. Ռոբակիձեի համատեղ ուսումնասիրությունը<sup>5</sup>:

### **Պատմաճարտարապետական ուսումնասիրություններ (1950-1980-ական թթ.)**

XX դ. 50-80-ական թվականներին հրատարակվեցին մի շարք ուսումնասիրություններ, որոնք, սակայն, հիմնականում ճարտարապետական ուղղվածության էին: Ազգագրական առումով փոխադարձ ազդեցություններով պայմանավորված՝ հայկական և վրացական տների համանման կողմերին է անդրադարձել Ռ. Աղաբաբյանը<sup>6</sup>: Հայկական գյուղական բնակարանի ուսումնասիրության պատմաճարտարապետական գրականության մեջ կարևոր է Ա. Յակոբսոնի<sup>7</sup> և այլոց աշխատությունները: Առավել հիշատակելի է Ս. Մնացականյանի<sup>8</sup> աշխատությունը, որում տրված է խորհրդային շրջանում հայկական ավանդական բնակավայրերի վերափոխման օրինաչափությունները: Այստեղ վերջինս շեշտը դրել է կոլեկտիվացման տարիների գյուղական բնակավայրերի հատակագծման ու կառուցապատման, կոլտնտեսային արտադրական կառուցվածքների, գյուղական բնակելի տան և, վերջապես, գյուղական բնակավայրերի, հասարակական կառուցվածքների վերափոխումների վրա: Հեղինակն անդրադառնում է նաև այն խնդրին, թե ժողովրդական բնակարանների ձևերն ինչպես են փոխանցվել ժամատների

<sup>1</sup> Ст'у Ильина М., Древнейшие типы жилищ Закавказья. М., 1964.

<sup>2</sup> Ст'у Чиковани Т.А., Классификация и генезис закавказского жилища со ступенчато венцеобразным перекрытием, “Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX-XX вв.”, вып. I. М., 1971, с. 33-37.

<sup>3</sup> Ст'у Витов В., О классификации поселений, “СЭ”, 1953, № 3, с. 27-38.

<sup>4</sup> Ст'у Кобычев В.П., Жилище народов Восточного Закавказья в XIX веке, “СЭ”, 1957, № 3.

<sup>5</sup> Ст'у Кобычев В.П., Робанидзе А.Н., Основы типологии и картографирования жилища народов Кавказа (Материалы к Кавказскому историко-этнографическому атласу), “СЭ”, 1967, № 2.

<sup>6</sup> Ст'у Агабабян Р.А., Композиция купольных сооружений Грузии и Армении. Ереван, 1950.

<sup>7</sup> Ст'у Якобсон А.Л., Очерк истории зодчества Армении V-XVIII веков, М.-Л., 1950:

<sup>8</sup> Ст'у Մնացականյան Ս., Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Ե., 1956:

ճարտարապետությանը<sup>1</sup>: XVIII-XIX դդ. ժողովրդական բնակելի շենքերի մասին առանձին գլխով են անդրադարձել ճարտարապետներ Վ. Ս. Հարությունյանը Ս.Ա. Սաֆարյանի հետ համատեղ աշխատության մեջ<sup>2</sup>:

Ճարտարապետական, ինչ-որ չափով նաև ազգագրական առումով, հանգամանալի հետազոտություն է կատարված Ս. Վարդանյանի կողմից<sup>3</sup>: Ներկայացրել է ժողովրդական բնակելի տների աստիճանական զարգացման պատմությունը՝ սկսած պարզագույն օթևանից մինչև բարդ հատակագծային բնակելի տները: Այն պատմական ակնարկ է բնակելի կառույցների, բնակարանային համալիրների, նրանց առանձին տարրերի ծագման ու զարգացման մասին՝ հնագույն ժամանակներից մինչև խորհրդային ժամանակները: Հանգամանորեն շարադրված է բնակելի տների էվոլյուցիան՝ կապված հայ ժողովրդի նյութական ու մշակութային կյանքի զարգացման, երկրի աշխարհագրական առանձնահատուկ պայմանների, տեղական շինանյութերի առկայության հետ և այլն: Աշտարակի ժողովրդական տան կառուցման սկզբունքներին է նվիրված Է. Հակոբյանի<sup>4</sup>, Սյունիքի, նաև Վայոց ձորի, Քեղարքունիքի քաղաքային և գյուղական բնակելի տան ճարտարապետության մասին է Ն. Պապուխյանի<sup>5</sup>, Գյումրիի ժողովրդական ճարտարապետությանն է նվիրված Ս. Մաթևոսյանի<sup>6</sup> և այլոց աշխատությունները: Դրանցում հեղինակները բնութագրել են տարածաշրջաններին բնորոշ ժողովրդական ինքնատիպ ճարտարապետական լուծումները: Հազարամյակների խորքից եկող այդ ժառանգության նյութական մնացորդները, նրանց կողմից չափագրվել, լուսանկարվել և վերլուծության են ենթարկվել: Շոշափվել են հին քաղաքների, ավանների և գյուղերի կառուցապատման, տարբեր բնույթի շենքերի ու շինությունների կառուցվածքային, համադրվածքային և գեղարվեստական առանձնահատկությունները: Այդ նույն սկզբունքով Հայաստանի արտադրական կառույցների՝ ձիթհանների, ջրաղացների և հնձանների ուսումնասիրությանն է նվիրվել Հ. Խալփախյանի<sup>7</sup> մենագրությունը: Այնտեղ շարադրվում են ինչպես անցյալում, այնպես էլ խորհրդային տարիներին լայնորեն տարածված արտադրական կառուցվածքների կոմպոզիցիոն ու կառուցողական առանձնահատկությունները, նաև՝ դրանց ճարտարապետական ձևերի զարգացման պատմական փուլերի ընդհանրությունը: Նույն հեղինակը հանգամանալի ուսումնասիրություն է նվիրել նաև Հայաստանի քաղաքացիական ճարտարապետությանը<sup>8</sup>: Գիտնականն անդրադարձել է Հայաստանի ժողովրդական վարպետների շինարարական ավանդույթներին, միջնադարյան Ռուսիայի ու Հայաստանի շինարարական մշակութային կապերին, Հայկական լեռնաշխարհի հնագույն շինարարական մշակույթին<sup>9</sup>: Հայ ժողովրդական բնակարանի հնագույն ձևերին է անդրադարձել Ն. Ս. Տոկարսկին<sup>10</sup>:

### **Պատմաազգագրական ուսումնասիրություններ 1950-1980-ական թթ.**

Պատմաազգագրական համալիր ուսումնասիրության «Ազգագրական հանդեսի» (1896-1916 թթ.) ավանդույթների շարունակությունը հանդիսացավ 1970 թվականից առ այսօր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարը, որի առաջին պրակը վերաբերում է Վարդան Թեմուրճյանի «Գամիթի հայերը» պատմաազգագրական բնույթի ուսումնասիրությանը: Գրքի IV գլխում զետեղված է «Բնակելի տունը, տնտեսական օժանդակ կառույցներով» բա-

<sup>1</sup> Տե՛ս Мнацаканян С.Х., Архитектура армянских притворов, Ереван, 1952.

<sup>2</sup> Տե՛ս Арутюнян В.М. и Сафарян С.А., Памятника армянского зодчества, Москва, 1951.

<sup>3</sup> Տե՛ս Վարդանյան Ս., Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, Պատմական ակնարկ, Ե., 1959:

<sup>4</sup> Տե՛ս Հակոբյան Է., Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը, Ե., 1964:

<sup>5</sup> Տե՛ս Պապուխյան Ն., Սյունիքի ժողովրդական բնակարանի ճարտարապետություն, Ե., 1972:

<sup>6</sup> Տե՛ս Մաթևոսյան Ս., Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Ե., 1965:

<sup>7</sup> Տե՛ս Խալփախյան Հ., Հայաստանի արտադրական կառուցվածքները, Ե., 1961:

<sup>8</sup> Տե՛ս Халпахчян О., Гражданское зодчество Армении (жилые и общественные здания), М., 1971.

<sup>9</sup> Տե՛ս Халпахчян О., Строительные традиции народных мастеров Армении (Материалы к истории строительного искусства на примере памятников Санаина), «Архитектурное наследие» (М.), 1953, № 3, с. 36–78; Նույնի՝ Культурные связи Владимиро-Суздальской Руси и Армении. М., 1977; նույնի՝ «Строительная культура Армянского нагорья с древнейших времен по VII в. до н.э.», «Архитектурное наследие», 1983, 31, с. 98-132.

<sup>10</sup> Տե՛ս Токарский Н. М., Архитектура древней Армении, Ереван, 1946.

ժինը (էջ 70-84): Մատենաշարի 5-րդ պրակում հրատարակված է Գևորգ Հալաջյանի «Դերսիմի հայերի ազգագրությունը» ուսումնասիրությունը (ՀԱԲ, հ. 5, Երևան, 1973), որում շարադրված է բնակավայրեր և շենքեր բաժինը (էջ 201-218): Մատենաշարի 8-րդ պրակում (Երևան, 1978) հրատարակված է Սերինե Ավագյանի «Արձակ պատմաազգագրական ուսումնասիրությունը», որի 37-41 էջերում ներկայացվում է բնակարանային համալիրն ու կահ-կարասին: 10-րդ պրակը (Երևան, 1980) նվիրված է Գ.Գ Գևորգյանի՝ հայկական գաղթաշախներից մեկին՝ Ղզլարին (ՌԴ՝ Ղաղստանի Ինքնավար Հանրապետություն): Աշխատության «Նյութական մշակույթ» բաժնում (էջ 33-44) ուշագրավ տեղեկություններ է հաղորդվում նաև բնակարանի, կահ-կարասու մասին: 12-րդ պրակում (Երևան, 1981) ներկայացվում է Ստ. Լիսիցյանի «Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատությունը, որի 32-33 էջերում՝ «Բնակավայրերն ու բնակարանը»: 15-րդ հատորում (Երևան, 1982) հրատարակված է Բ. Թռչալայանի «Համաշենահայերի ազգագրությունը», որում բնակավայրերի մասին խոսվում է 51-62 էջերում: Առանձին գրքերով հրատարակվել են՝ Գ. Հակոբյանի՝ Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 115-128, Վ. Պետոյանի՝ Սասնա ազգագրություն, Երևան, 1965, էջ 188-206, Ե. Կարապետյանի՝ Սասուն. ազգագրական նյութեր, Երևան, 1962, էջ 46-56:

Ժողովրդական բնակարանի ազգաբանական ուսումնասիրության գործում շատ կարևոր է ձեռքի տակ ունենալ նաև սփյուռքահայ XX դ. կեսերի մտավորականության աշխատությունները, ինչպիսիք էին Հ. Սարգիսյանի «Բալու. իր սովորույթները, կրթական և իմացական վիճակը և բարբառը» (Կահիրե, 1932); Ա. Ալպոլաճյանի «Պատմություն հայ Կեսարիո. տեղագրական, պատմական և ազգագրական ուսումնասիրություն» (Կահիրե, 1937, հ. 2), նույնի՝ «Պատմություն Եվրոպիո հայոց. տեղագրական, պատմական և ազգագրական տեղեկություններով» (Կահիրե, 1952); Գ. Սյուրմենյանի «Երզնկա» (Կահիրե, 1947), Հ. Գասպարյանի «Չմշկածագ և իր գյուղերը» (Պոստոն, 1969) և այլք:

ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժինը մի կողմից՝ հայկական ժողովրդական շենքերին նվիրված ատլասը կազմելու, մյուս կողմից՝ հիմնախնդիրը ազգագրական համալիր ուսումնասիրության ենթարկելու անհրաժեշտությունից մղված՝ 1950-ական թվականներից հաջորդաբար կազմակերպում է գիտարշավներ՝ Հայաստանում և նրանից դուրս գտնվող հայաշատ վայրերում հնամենի կառույցների մնացորդներն ու նորերը նկարագրելու և չափագրություններ անելու նպատակով: Գիտարշավների միջոցով հարուստ նյութ կուտակվեց ապագա ուսումնասիրության համար: Դրանց մի մասի հիման վրա Դ. Վարդունյանը 1956 թ. հրատարակած «Լոռեցիների նոր կենցաղը» աշխատության մեջ ներկայացրել է Լոռու պատմաազգագրական շրջանի շենքերի ժամանակակից տեսակների հետ նաև հին շենքերի տիպերը: Գրեթե նույն ժամանակ Վ. Բդոյանն էլ հրատարակեց «Հայկական կոլտնտեսային տունն ազգագրական տեսակետից» հոդվածը<sup>1</sup>, անդրադառնալով 1950-ական թվականների բնակելի և տնտեսական շենքերին ու դրանց զարգացման ընթացքին: Սովետական ժամանակաշրջանում բնակարանաշինության մեջ կատարված փոփոխությունների և նորի՝ հայ կոլտնտեսականների բնակարանների վերաբերյալ եղած ուսումնասիրություններից կարելի է հիշատակել Դ. Վարդունյանի և Է. Կարապետյանի համատեղ աշխատությունը<sup>2</sup>:

Ըստ բնակավայրերի և ժողովրդական ավանդական բնակարանային համալիրի տիպերի՝ Հայաստանի պատմաազգագրական շրջանավորման հարցերն է քննարկում Դ. Վարդունյանը իր հետազոտություններից մեկում<sup>3</sup>: Հայկական ժողովրդական բնակարանի՝ ըստ առանձին պատմաազգագրական շրջանների հակիրճ և ամփոփ բնութագիրն է տրված Ա. Տեր-Սարգսյանի «Армяне. История и этнокультурные традиции» (Մ., 1998 (69-100), նույնը առավել հանգամանալի տրված է Հարություն Մարությանի «Поселения и жилища» («Армяне», серия «Народы и культуры», М., 2012, էջ 205-232) գրքերում: Առանձին պատ-

<sup>1</sup> Տե՛ս Բդոյան Վ., Հայկական կոլտնտեսային տունը ազգագրական տեսանկյունից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 4, էջ 37-54, նույնի՝ «Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ)», Ե., 1974, էջ 66-95:

<sup>2</sup> Տե՛ս Վարդունյան Դ., Կարապետյան Է., Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Ե., 1963, էջ 29-48:

<sup>3</sup> Տե՛ս Վարդունյան Դ., Հայաստանի հիմնական պատմաազգագրական շրջանների ընդհանուր բնութագիրը (XIX-XX), «Պատմաբանասիրական հանդես», 2004, № 2, էջ 48-64:

մաագագրական շրջաններից՝ Աղձնիքի բնակավայրերի և ժողովրդական կառույցների բնութագիրն է տրված Ռ. Նահապետյանի՝ «Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես-XX դ. սկիզբ) [Պատմագագրական ուսումնասիրություն» աշխատության մեջ (էջ 42-51)]:

Գնահատելով հայկական գյուղական բնակարանների վերաբերյալ եղած ուսումնասիրությունները, կարելի է ասել, որ նրանց մեծ մասը մասնակիորեն են անդրադառնում թե՛ պատմագագրական շրջանների ընդգրկման և թե՛ կառուցվածքային ու գործառնության բնութագրության հարցերին: Պատմական Հայաստանի պատմագագրական շրջանների մի զգալի մասի (օր.՝ Այրարատ, Տավուշ) վերաբերյալ որևէ ուսումնասիրություն դեռևս արված չէ: Ողջ Հայաստանի բնակարաններին վերաբերող ուսումնասիրություններում հետևողականորեն չեն բացահայտված առանձին շրջանների առանձնահատկությունները, դեռևս գիտական հրապարակի վրա չկան համալիր ուսումնասիրություններ: Ուսումնասիրություններում բնակարանը պետք է դիտարկվի ոչ միայն որպես նյութական կառույց, այլև բնաաշխարհագրական, պատմաքաղաքական, սոցիալտնտեսական, կենցաղամշակութային բազմապիսի գործոնների ազդեցությամբ ձևավորված բարդ մշակութային երևույթ: Այդուհանդերձ, վերը թվարկված ազգագրագետների, ճարտարապետների մի քանի սերունդների ջանքերով հնարավորին չափով հետազոտվել է հայոց ավանդութային ժողովրդական բնակարանն իր ենթաէթնիկ (լոկալ) տարբերակներով և դրանց արդյունքները կարող են հիմնախնդրի ամբողջական ու նորովի լուծմանը հասնելու օգտակար ատաղձ ծառայել:

Հիմնախնդրի ուսումնասիրության շրջանակներում հայ գիտական ազգաբանության մեջ նոր երևույթ էր Է. Մարգարյանի (ղեկավար), Ս. Հարությունովի, Ի. Բարսեղյանի, Ս. Ենգիբարյանի, Է. Մելքոնյանի, Յու. Մկրտումյանի, Կ. Սարինգուլյանի «Կենսապահովման մշակույթը և էթնոսը» խորագրով համատեղ էթնոմշակութաբանական հետազոտությունը<sup>1</sup>: Այստեղ բնակավայրերի ու բնակարանների էթնոմշակութաբանական հետազոտության ուշագրավ փորձ են կատարել Է. Մելքոնյանը և Յու. Մկրտումյանը: Է. Մելքոնյանը Հայաստանի լեռնային (Սյունիք), նախալեռնային (Շիրակ), հովտային (Արարատյան դաշտավայր) արեալների ավանդական և ժամանակակից բնակավայրերի համահայկական տիպերի բնութագրության փորձ է կատարել՝ կախված դրանց ձևավորման վրա ազդող բնաէկոլոգիական, սոցիալ-տնտեսական գործոններից ու ազգային ավանդույթներից<sup>2</sup>: Յու. Մկրտումյանը, ըստ Հայաստանի երեք խոշոր պատմագագրական շրջանների դաշտային ազգագրական առկա նյութերի համեմատման սկզբունքի, ներկայացրել է համահայկական բնակարանային տիպերի ձևավորման գործառնության գործունեության և զարգացման հիմնական առանձնահատկություններն ու ուղղությունները<sup>3</sup>: Այս հարցում հեղինակը շատ է կարևորել բնակարանների տիպերի պայմանավորվածությունն ընտանիքների կազմով ու կառուցվածքով, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով:

1980-ական թթ. Հ. Մարությանը կենցաղամշակութային առումով առավել հանգամանորեն է ուսումնասիրել հայ ժողովրդական բնակարանի ներսույթը<sup>4</sup>: Նա, հայկական ժողովրդական ավանդական բնակարանի գործառնության բնութագրությունը տալուց զատ, ներկայացրել է ժողովրդական բնակարանի ավանդական ջեռուցման և լուսավորության, կահույքի ու կարասու կիրառական և տիպաբանական բնութագրությունը, ներսույթի դեկորատիվ կիրառական տարրերի գեղարվեստական, ճարտարապետական յուրահատկությունները:

Այսուհանդերձ, թե՛ հայկական, թե՛ կովկասագիտական ու ընդհանուր ազգագրական գրականության մեջ դեռևս հստակ մշակված չէ բնակարանի՝ որպես սոցիալական ֆենոմենի, հետազոտման համընդհանուր ճանաչման արժանացած սկզբունքներ: Դրանով հնարավորություն կընձեռվեր պատմահամեմատական խոր վերլուծության հիման վրա կատարելու

<sup>1</sup> St'u "Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры)". Ереван, 1983; St'u նաև Արутյոնով Ս.Ա., Մկրտումյան Յ.Ս., Сельские поселения Армении. Введение, "Культура жизнеобеспечения и этнос", с. 110-117.

<sup>2</sup> St'u Մելքոնյան Է., Сельские поселения Армении, "Культура жизнеобеспечения и этнос", с. 110-149.

<sup>3</sup> St'u Մկրտումյան Յ., Сельское жилище армян, "Культура жизнеобеспечения и этнос", с. 150-188.

<sup>4</sup> St'u Մարտյան Ա.Т., Армянские традиционные зернохранилища (по этнографическим материалам), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 7, с. 65-76; նույնի՝ Интерьер армянского народного жилища (вторая половина XIX-начало XX в.). Материалы к "Кавказскому историко-этнографическому атласу", "Армянская этнография и фольклор (материалы и исследования)", т. 17. Ереван, 1989, с. 63-142.

Կենսապահովման մշակույթի այդ բաղադրիչի բազմակողմ հանգամանալի ուսումնասիրություն: Ցավոք, ինչպես բնակավայրի, այնպես էլ բնակարանի վերաբերյալ առ այսօր հայագիտության մեջ չկա համալիր, ամբողջական հետազոտություն: Եղածն առանձին հրապարակումներ են ու հոդվածներ: Հայ ազգագրական գիտության խնդիրն է՝ ունենալ հիմնարար, հայկական ավանդական և ժամանակակից բնակավայրերին ու բնակարանի տիպերին նվիրված ամփոփ և ամբողջական մենագրական աշխատություններ:

**Рафик Наапетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА.** Армянское народное жилище, и экономические и бытовые сооружения тесно связанные с ней, один из сложных и самобытных культурно - бытовых комплексов жизнеобеспечения, которое в течение тысячелетий было тесно связано с самыми разнообразными сторонами жизни армянского населения. Поэтому при изучении народных архитектурных сооружений, кроме их культурных признаков, раскрываются также многочисленные вопросы, касающиеся этнического происхождения и общего характера экономики местного армянского народа, уровня развития техники, имущественных и классовых отношений, семейно - общественного быта, общинных традиций, эстетических представлений народа, духовной культуры, народного мышления и.т.д.

В этой статье приводится общая картина исследований об армянском народном жилище с строительно - конструктивной и этнографической направленностью, с комплексным использованием и анализом которых только можно составить целостное представление об армянской народной архитектуре, о типах народных жилищных комплексов, долгом пути развития и их места и роли в системе этнической культуры.

Статья может быть полезна как этнографам, архитекторам, так и людям, занимающимся вопросами армянской истории и культуры.

***Ключевые слова:*** народное жилище, Этнографический журнал, Ерванд Лалаян, Степан Лисицян, главный дом, Армянская этнография и фольклор, историко-архитектурный, историко-этнографический, Д. Вардумян, культура жизнеобеспечения.

**Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT.** The Armenian national apartment, and the economic and domestic facilities closely associated with it, is one of the most complicated and original cultural and social life support complexes, which for thousands of years has been closely connected with the most diverse aspects of the life of the Armenian population. Therefore, during the study of national architectural structures, in addition to their cultural characteristics, numerous issues related to the ethnic origin and the general nature of the economy of the local Armenian people, the level of development of technology, property and class relations, family and social life, community traditions, aesthetic ideas of the people, spiritual culture, people's thinking, and a lot of other issues are also revealed.

This article provides a general picture of the research on the Armenian people's apartment with a constructive and ethnographic orientation, with the complex use and analysis of which only one can form a holistic view of the Armenian national architecture, national housing complexes, their types, long-term development path, multifaceted social perception and the possibility of identifying its place and role in the system of ethnic culture. The article also discusses the existing level of ethnographic and architectural studies of the national apartment.

The article can be useful both for ethnographers, architects and people dealing with the issues of Armenian history and culture.

***Key words:*** people's apartment, Ethnographic magazine, Yervand Lalayan, Stepan Lisitsyan, main house, Armenian ethnography and folklore, historical-architectural, historical-ethnographic, D. Vardumyan, culture of life support.